ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿԳՄՍՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ
ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ԽՈՐՀՐԴԻ 2025թ-Ի 14-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏՈՒՄ
ՔՈԼԵՋԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԿՈՒՌՈՅԱՆ
«14» «10» 2025թ.

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ, ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

/նոր խմբագրությամբ/

Գավառ 2025թ.

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը նախատեսված է կարգավորելու ՀՀ ԿԳՄՍՆ «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման վերաբերյալ բողոքների /դիմումների/ ներկայացման և քննարկման հարցերը:

1.2. Սույն կարգի դրույթները տարածվում են առկա և հեռակա ուսուցման համակարգերում կրթական բոլոր ծրագրերով ուսումնառող ուսանողների վրա:

1.3. Ուսանողը կարող է բողոքարկել գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման արդյունքները քոլեջի բողոքարկման հանձնաժողովին, որը ձևավորվում է քոլեջի տնօրենը՝ բողոքի առկայության դեպքում:

1.4. Բողոքարկման հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝

ա) տնօրենը (նախագահ),
բ) ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը (նախագահի տեղակալ),
գ) համապատասխան ամբիոնի վարիչը,
դ) առարկայի /մոդուլի/ դասախոսը,

Հանձնաժողովի նիստերը արձանագրվում են նախքան նիստը սկսվելը Հանձնաժողովի կազմից՝ քվեարկության արդյունքում ընտրված քարտուղարը:

1.5. Ուսանողների հանրակրթական առարկայի պետական ավարտական քննությունների արդյունքների բողոքարկումը կարգավորվում է համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ **«Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի հանրակրթական առարկաների պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման» կարգի:**

1.6. ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի հուլիսի 18-ի №638-Ն հրամանի հավելվածով հաստատված կարգի համաձայն պետական ամփոփիչ ստուգման արդյունքների բողոքարկում ուսանողին չի թույլատրվում:

1.7. Ուսանողի գրավոր բողոք-դիմումը հիմք է գնահատման արդյունքների վերանայման և, անհրաժեշտության դեպքում, սույն կարգով վերագնահատում իրականացնելու համար:

2. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1.Ուսանողը կարող է գրավոր բողոք-դիմումը ներկայացնել՝ առարկայի /մոդուլի/ ամփոփիչ գնահատականը ներկայացնելուց հետո՝ երկու ժամվա ընթացքում, սույն կետով նախատեսված ժամկետից հետո ներկայացված գրավոր բողոք-դիմումը ենթակա չէ քննարկման:

2.2.Գնահատականը բողոքարկելիս ուսանողը գրավոր հստակ նշում է բողոքի հիմքում ընկած հանգամանքները և հիմնավորումները:

2.3. Ուսանողը գրավոր բողոք-դիմումը ներկայացնում է Քոլեջի տնօրենին, ում կողմից ձևավորվում է բողոքարկման հանձնաժողով:

2.4 Կրկնակի ստուգման գործընթացն անցկացվում է գրավոր բողոք-դիմումը ստանալու օրը:

2.5.Գնահատականի վերանայման որոշում ընդունելուց հետո գրավոր բողոք-դիմում ներկայացրած ուսանողը դրա կազմակերպման տեղի և ժամանակի մասին ծանուցվում է դիմումը ներկայացնելուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում:

2.6 Բողոքարկողի խնդրանքով գրավոր բողոք-դիմումը կարող է հետ կանչվել դրա քննարկման ցանկացած փուլում՝ մինչև վերանայումը:

3. ԲՈՂՈՔՆԵՐԻ /ԴԻՄՈՒՄՆԵՐԻ/ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

3.1.Գրավոր բողոք-դիմումը նախապես քննարկվում է հանձնաժողովի կողմից:
3.2.Ամփոփիչ գնահատականների արդյունքների բողոքարկման դեպքում հանձնաժողովն իրավունք ունի գրավոր բողոք-դիմումը ներկայացրած ուսանողին քննել տվյալ առարկայի /մոդուլի/ ծրագրի շրջանակում:
3.3.Հանձնաժողովի կայացրած որոշումները պետք է լինեն հիմնավորված:
3.4. Հանձնաժողովի կողմից իրականացված կրկնակի ստուգման և գնահատման արդյունքում նախկին գնահատականը կարող է մնալ անփոփոխ, բարձրացվել կամ իջեցվել:
3.5. Հանձնաժողովի որոշումները վերջնական են, ինչի մասին կազմվում է արձանագրություն, որտեղ արտացոլվում է վերջնական գնահատականը:
3.6. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը ուսանողի փոփոխված գնահատականը նշում է համապատասխան փաստաթղթերում՝ «գնահատականը փոխված է իմ գիտությամբ» գրառմամբ և ստորագրում:

3.7. Բողոքարկման արդյունքը քննարկվում է համապատասխան ամբիոնում: